ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ա/ձ Գոհար Վարդանյան-ն ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/40-Ք ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
2	ՀՀ դրոշ /4.5x9մ/ ՀՀ դրոշ (4.5x9մ)՝ եռագույն, վերևից ներքև ձգվող կարմիր, կապույտ, նարնջագույն հորիզոնական հավասար շերտերով, կտորը «Կաբարդին» տեսակի: Գործվածքը՝ անջրաթափանց, բաղադրությունը՝ 100% պոլիէսթեր, խտությունը՝ ոչ պակաս 270 գ/մ2-ից: Դրոշի լայնության և երկարության չափերի հարաբերությունը պետք է լինի 1:2-ի: Դրոշի երկարության և լայնության շեղումը չպետք է գերազանցի ±2%-ը: Դրոշի պաստառի եզրերը պետք է մշակված լինի երեսակողմից չերևացող զարդակարով, որից հետո՝ 0,3-ից մինչև 1,0 սմ լայնությամբ փակ կարվածքով (հարթակարով): Կարը պետք է լինի ամուր, ուղիղ, կարի ծայրերը պետք է ամրացված լինեն հետադարձ կարով՝ 0,7 սմ ոչ պակաս երկարությամբ: Դրոշը պետք է կարված լինի շերտի գույնի կամ թափանցիկ կարի թելերով: Երեք շերտից կարված դրոշը պետք է կցակարված լինի տարբեր թելերով՝ վերևի և ներքևի շերտերի գույներին համապատասխան: Դրոշի ամրացման եղանակը՝ եզրակի օգնությամբ: Եզրակի լայնությունը՝ 3,0–ից մինչև 3,5 սմ:Այլ պայմաններ* Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Մատակարարը՝ իր միջոցներով և իր հաշվին: ** Մատակարարված ապրանքը պետք է լինի նոր՝ չօգտագործված, առանձին փաթեթավորված: Փաթեթավորումը՝ պոլիէթիլենային պարկերով, յուրաքանչյուր պարկի մեջ մեկ հատ պիտակավորված, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը: փաթեթավորման միավորի վրա պետք է փակցված լինի պիտակ, որը պետք է պարունակի արտադրատեսակի անվանումը և դրա չափերը: *** Հրավերով մասնակցից պահանջել առաջարկվող ապրանքի արտադրողի անվանումը և տեխնիկական բնութագիրը: ****

	Ապրանքի համար սահմանվում է երաշխիքային ժամկետ՝ պատվիրատուի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից առնվազն 365 օրացուցային օր: ***** Ընթացակարգն իրականացվում է համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի 6-րդ մասի: ****** Դրոշները պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության պետական դրոշի ՀՍՏ 50-2012 ստանդարտի պահանջներին:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ա/Ձ Գոհար Վարդանյան в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/40-Ք ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
2	